ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«15» մայիսի 2012թ.
ք. Արմավիր

N 32 - Ա

ԱՐԹՈՒՐ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2006 թվականի հունիսի 26-ի N 546-Ն որոշմամբ սահմանված N 1 հավելվածի 8-րդ և 9-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի պաշտոնի անձնագիրը՝

կարգադրում եմ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ (ծածկագիր՝ 63-2.1-3) Արթուր Այվազյանին 2012 թվականի մայիսի 21-ից հունիսի 1-ը ներառյալ գործուղել քաղաք Երևան՝ մասնակցելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2011 թվական N 949-Ա որոշմամբ հաստատված վերապատրաստման ծրագրով Հայաստանի պետական ագրարային համալսարանի կողմից անցկացվող դասընթացներին:
2. Արթուր Այվազյանի վերապատրաստման մեջ գտնվելու ժամանակահատվածում վարչության պետի պարտականությունների կատարումը 2012 թվականի մայիսի 29-ից վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ Վարդգես Աբրահամյանին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ՝ Վ.Մկրտչյան) սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարում:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում 2012 թվականի մայիսի 21-ից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ